ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՂԹԱՆՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ, ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Փառք և գոհություն Աստուծո, որ անգամ մը ևս մեզի շնորհեց՝ ըլլալ գործիքը Աստվածային շնորհքին. Սուրբ Հոգու ներգործության, որով այսօր մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երկու միաբանները՝ Վազգեն և Մովսես աբեղաները, ստացան վարդապետական դավազանի իշխանություն՝ քարոզելու Աստուծո խոսքը, համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո դավանության:

Արարողությունը, Գրիգոր Տաթևացիին մեզի կտակված, այնքան թելադրական էր, ներշնչողական, որ չեմ կարծեր, թե կարիքն ըլլա անոր բացատրության: Հատկապես դուք, որ այս վայրկյանեն ետքը պիտի կոչվիք վարդապետք Եկեղեցվույս Հայաստանյայց, բառ առ բառ, զգացում առ զգացում, մտածում առ մտածում հետևեցաք աղոթքներուն և Աստվածաշնչական ընթերցումներուն, դուք անդրադարձաք, թե այսօր կկոչվիք ավելի բարձր, նվիրական և պատասխանատու գործին՝ զԱստված թարգմանել մեր ժողովուրդին կյանքի մեջ: Անկարելի բան է, որ զԱստված թարգմանեք, եթե դուք Աստուծմով թափանցված չըլլաք: Ձեք կրնա լույս տալ, եթե լույս չըլլաք: Ձեք կրնա սրբություն փոխանցել, եթե սրբությամբ հայցելված չըլլաք: Ձեք կրնար իմաստություն փոխանցել, եթե Աստուծմով դուք իմաստնացած չըլլաք: Մեկ խոսքով, քարոզությունը սոսկ բառի, խոսքի փոխանցում չէ, ապրումով, դիտակցությամբ, հոգիով Աստուծո խոսքին թարգմանը ըլլալ և ձեր կյանքն ու բարքն են այն, ինչ որ պիտի ըլլան դասագիրքը ժողովուրդին համար, դասագիրք, որուն մեջեն կարդան Աստուծո կյանքի դասը, ձեր կյանքի, ձեր բարքի, ձեր խոսքի և ձեր գիրի: Ահավասիկ չորս տվյալներ: Կյանք, ապրում, բարք, հարաբերություն, խոսք, համոզումին հարազատ արտահայտություն և գիրը, որով պիտի փոխանցեք այն, ինչ որ Աստուծմե ստանաք: Մեր երկու աբեղաները անցնող երկու տարիներու ընթացքին արժանի համարվեցան այսօրվան արարողության, որովհետև անոնք մեր Մայր Աթոռի և, առհասարակ, Հայ Եկեղեցվո ավանդությանը համաձայն, իրենց վարդապետական ավարտաճառերը պատրաստեցին: Մեկը՝ Վազգեն աբեղան, ուսումնասիրեց Գրիգոր Տաթևացիի «Գիրք Հարցմանց» և «Ոսկեփորիկ» մատյաններու հայրաբանական ակունքները, թե ուրկե Գրիգոր

Տաթևացին կքաղեր իր դաղափարները Եկեղեցական Հայրերու դրականության մեջեն: Եվ Մովսես աբեղան պատրաստեց իր ավարտաճառը ութերորդ դարու հայ քրիստոնեական միտքն ուսումնասիրելով, հատկապես երկու մեծ դեմքերու՝ Հայ Եկեղեցվո կարկառուն, մտքով հարուստ և կյանքով պերճախոս Հովհան Օձնեցիի և Խոսրովիկ Թարգմանչի գրությանց մեջեն: Երեք ընթերցողներ իրենց ավարտաճառերը կարդացին և, գրավոր զեկույց տալով, իրենց արժանավորությունը հաստատեցին և անոր վրա այսօր մենք փափաղեցանք որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց այս տաճարին մեջ, առաջին անդամն ըլլալով, վարդապետական աստիճանի տվչության արարողությունը կատարել անձամբ:

Սիրելի կրտսեր եղբայրներ, մենք կապրինք այնպիսի ժամանակներու մեջ, ուր կարծեք թե բառերն սկսած են կորսնցնել իրենց վավերականությունը և իրենց ճշմարտությունը: Վարդապետ, ուսուցիչ, քահանա, հովիվ, եպիսկոպոս. անուններ նվիրական, աստվածաշնչական, որոնք անձերով պիտի արտահայտվին, անուն ըլլալե պիտի դադրին՝ անձ ըլլալու համար: Անձնավորյալ բառեր են այս բառերը: Վարդապետ ես կոչումով, վարդապետ եղիր կյանքով: Այն ատեն է, որ անուն և անձ կնույնանան, կդեղեցկանան փոխադարձապես: Գրիգոր Տաթևացի, վարդապետ եռամեծ, ինչո՞ւ համար, ոչ Գրիգոր անունին համար, իր կյանքին համար, իր բարքին համար, իր գործին համար: Ուսուցիչ ես, ուսուցիչ եղիր և ոչ թե ուսուցչի նման բան մը: Եղիր հարազատ դուն քեզի: Հովիվ ես, ժողովրդովդ զբաղվե: Ժողովուրդիդ բարիք ընելուդ մեջ տես փառքդ և կյանքիդ իմաստը: Արվեստագետ ես, արվեստով արժեցուր ինքզինքդ: Ակադեմիկոս ես, հոգեկան իմացական ճառագայթումովդ արժեցուր. անուն, տիտղոս դիրք արժեք չունին, եթե երբեք անձնավորյալ չըլլաս:

Մեր բոլորին կենսատիպարը գերազանց և անգերազանցելի, աստվածահիմն վարդապետը ըսավ. «Ես եմ հովիվն: Ես եմ, որ իմ անձս կդնեմ, իմ անձս կզոհեմ իմ ոչխարներուն համար»: Եթե չես կրնար, ի՞նչ իմաստ ունի հովիվ անունը քո անունիդ կցված: Դատարկություն մըն է, անափառություն մըն է երբեմն: Եվ այս դարուն մանավանդ, երբ կտեսնենք, որ բառերն ազնվական սկսել են դժգունիլ, այսօրվան արարողությամբը ես ի խորոց սրտի կաղոթեմ, որ վարդապետ բառը ձեր կյանքով և ձեր գործով լույս զգենու, վառ դույն առնե և այլևս չմնա դժգույն անուն, ձևական արտահայտություն: Եվ ատիկա մենք կրնանք ընել միայն այն ատեն, երբ հարատև, չարունակաբար, հետևողական ձևով ի հաղորդության ըլլանք Աստծու հետ, Աստվածաշունչի ընթերցումով, մեր հայրերու գրականությամբ ներթափանցվելով և մեր ժողովուրդի կարիքներուն կրակը մեր մեջ զգալով: Երբ կտեսնես ժողովուրդդ անոթի, հոգեկան սնունդի տեսակետեն, ո՛չ ժամանակ կիսնայես և ո՛չ հաճույքդ կնախա-

տեսես: Կըլլաս ջուր, Կըլլաս կերակուր, Կըլլաս լույս, Կըլլաս աղ, Կըլլաս խմոր և անով է, որ քո վարդապետությունդ և հոգևորականությունդ կարժեցնես և այս տիտղոսը, որ տրվեցավ այսօր, արժանի տիտղոս Կըլլա և ոչ թե ձևական անուն մը՝ աբեղա բառը փոխարկելով վարդապետ բառի:

Ամեն մեկ աստիճան Հայաստանյայց եկեղեցիին մեջ նոր պարտավորություն մըն է և նոր բան մըն է: Այս ըմբռնումով պետք է մոտենալ, այս հասկացողությամբ պետք է ընդառաջել և խոնարհության մեջ տեսնել ճշմարտի մեծությունը: Եթե մեծության ետևէ վազես, այն ատեն է, որ կփոքրանաս, եթե խոնարհության մեջ երթաս դեպի ժողովուրդը, Աստված քեզի կբարձրացնե: Եվ մենք փորձության մեջ ենք հաճախ՝ փառքին տուրք տալու և պարտքին նվազ տուրք տալու: Այս փորձությունը չմոտենա ձեզի: Եվ եթե մոտենա, հեռացրեք, որպեսզի կարենաք այս սուրբ Աթոռին, այս նվիրական Աթոռին իրապես ծառայել, որուն մեջեն անցան այնքան վարդապետներ: Արդյոք այստե՞ղ էր, երբ Մովսես Տաթևացին նոր շունչ բերավ, իր վարդապետությամբ փափկեցուց սրտերը միաբաններուն, և ժողովուրդը կենդանացավ հոգիով, պայծառացավ այս Աթոռը: Եղեք լույսի շող մը, սիրելի եղբայրներս, ստվեր մի՛ բերեք այս սուրբ անունին: Ձեր անձով, ձեր կյանքով, ձեր վարքով, աստվածպաշտությամբ, եկեղեցական արարողությանց կենդանի մասնակցությամբ, Աստվածային Բանին քարոզությամբը եղեք այնպես, որ երբ մարդիկ ձեզի նային ու ձեզ լսեն, զԱստված տեսնեն, մեր եկեղեցին կարդան ձեր անձերուն մեջեն: Ահա թե ինչ զգացումներով և ինչ մտածումներով այսօր ես, որպես հայրն այս միաբանության, ողջունեցի ձեզ քաղցրագույն սիրով և ասկեն ետքը, երբ կասեմ Մովսես վարդապետ, Վազգեն վարդապետ, զգաք Աստուծո պարտքին քաղցր լուծը ձեր վրա և այդ լուծին, իբրև ձեր կողմեն ընդառաջում, ծառայությունը ընծայեք մեր ժողովուրդին՝ անսակարկ կերպով, անպայման մոտեցումով և անշահախնդիր ծառայության, զոհողության գիտակցությամբ Աստուծո փառքին և մեր ժողովուրդի բարիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Հայաստանյայց եկեղեցվո բարեզարդության համար, Հավիտյանս հավիտենից. ամեն: